ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ «ԱԴԱՄՅԱՆ» ԴՊՐՈՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

14.04.2023 11:19

Ճանաչողական այցով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ են այցելել «Ադամյան» դպրոց ուսումնական հաստատության աշակերտները:

Աշակերտներին ողջունել և նրանց հետ զրուցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը:

Հյուրընկալված աշակերտներին ներկայացվել է փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները, փաստաբան դառնալու ընթացակարգը և անհրաժեշտ պայմանները:

Զրույցի ավարտին Փաստաբանների պալատի նախագահն աշակերտներին նվիրել է գիրք՝ ապագայում նրանց լավագույն իրավաբանների շարքերում տեսնելու ակնկալիքով:

Այնուհետև ճանաչողական այցը շարունակվել է Փաստաբանական ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը և նախագահի գլխավոր խորհրդական Արաքս Կիրակոսյանն աշակերտների հետ շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում և նրանց անմիջականորեն ծանոթանացրել Պալատի, Փաստաբանական Ակադեմիայի և Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքներին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })